

ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ՅՈՒՐԱՑՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՆՐԵՆՈՒՄ

ՔՆԱՐԻԿ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

Ժամանակակից հայերենում ռուսերենից և ռուսերենի միջոցով կատարված նորագույն փոխառությունները ենթարկվում են հնչյունաբանական (գրաբանական), քերականական (ձևաբանական), իմաստային և բառային յուրացման: Ուսումնասիրության համար օգտագործել ենք սովետահայ պարբերական մամուլը (1960—1983 թթ.), ուր ընդգրկված է ավելի քան 4500 փոխառություն:

Ժամանակակից հայերենում բառագիտական տեսակետից յուրացված պետք է համարել ռուսերենից կատարված բոլոր այն փոխառությունները, որոնց նշանակող հասկացությունների հայերեն համազորները չկան. ինչպես, օրինակ՝ ագիտատուր, ագիտացիա, ագրեսիա, ագրեսոր, բաս, բարիտոն, սոպրանո, տենոր և այլն: Այս կարգի փոխառյալ բառերն իրենց բնույթով տարատեսակ են: Դրանց ողող մասն ընդհանրապես որևէ լեզվով, որպես օրենք, չի թարգմանվում, մյուս մասը ժամանակակից հայերենի բառապաշար է մտնել հայերեն համապատասխան լիարժեք համազոր կամ ընդհանրապես համանշանակներ չունենալու պատճառով: Այսպիսի փոխառությունները կարելի է խմբավորել հետևյալ ձևով.

1) Անթարգմանելի են և չեն թարգմանվում. ա) ժողովուրդների, ազգությունների և ցեղերի տարբեր անվանումները՝ ալեուտ, ացտեկ, բուրյաթ, էսկիմոս, ինգուշ, կիմեր, չեչեն, ճոնոկամ, յուկագիր, նգանասան և այլն: բ) Տարբեր կրոնների, կրոնական աղանդների, նրանց սպասավորների, ծիսավայրերի անվանումները՝ բուդդա, իսլամ, կոստյոլ, սինագոգ, այաթոլա և այլն: գ) Տվյալ հասարակարգին՝ հատկապես արտասահմանյան պետական, վարչական կարգերին, վարչական բաժանմանը վերաբերող տարբեր անվանումները՝ բունդստառ, բունդեսպեր, բունդեստագ, լանդտագ, դեսարտամենտ, կոնգրես, կոռուես, կսենետ, մեյլիս, ստորտինգ, ֆոլկետինգ կամ՝ կանցլեր, պրեմիեր, պրեֆեկտ, կանտոն, շտառ, մագիստրատ, պրեֆեկտուրա և այլն: դ) Օտարերկրյա դրամական միավորների անվանումները՝ դոլար, զլոտի, էսկուդո, լեյ, լիրա, ֆրանկ և այլն: ե) Բուժական զանազան միջոցների, գեղերի անվանումները՝ ալբումին, ասպիրին, ատրոպին, ինսուլին, պենիցիլին, ստրեպտոմիցին և այլն:

2) Այնպիսի բնագավառի տերմիններ ու բառեր, որոնք սովորաբար հայերենում մասամբ թարգմանվում են, իսկ մյուս մասը այլևայլ պատճառներով թարգմանության ենթակա չեն: Այդ վերաբերում է հատկապես գիտության և արտագրության տարբեր ճյուղերի նեղ մասնագիտական, հասարակական-քաղաքական, փիլիսոփայական և այլ բնագավառների ուղղություն, ուսմունք և այդ ուսմունքի հետևորդ ցույց տվող տերմիններին, բուսական և կենդանական աշխարհի այն ներկայացուցիչների անվանումներին, որոնց տեսակները կամ օրինակները հայկական բնաշխարհում չեն աճում կամ բազմանում. ա) գիտության և արտագրության տարբեր բնագավառների նեղ մասնագիտական տերմիններ. ինչպես՝ ալգորիթմ, բետտա, գամմա, գրավիտոն, իֆս, իգրեկ, լագեր, կիբեռնետիկա, կոռդինատ, էլեկտրոն, նեյտրոն, նեյտրինո, պոզիտրոն, պրոտոն, պոպսար (մաթեմատիկա, ֆիզիկա), ալգեմիլեն, ալգետառ, լառեսֆ, էքսանոլ, պոլիմեր, մոնոմեր (քիմիա) և այլն: բ) Քանակի, չափի, ուժի տարբեր միավորներ նշանակող բառեր, ինչպես՝ գրամ, կիլոգրամ, տոննա, ցենտներ, մետր, սանտիմետր, քցցիմետր, կիլոմետր, էրգ, ամպեր, վատտ, վոլտ, կալո-

րիա և այլն: Դժվար չէ նկատել, որ այս կարգի բառերից մի քանիսը, օրինակ՝ ամպեր, վոլտ, անձնանվանական ծագում ունեն: գ) Հասարակական-քաղաքական, գիտություն, արվեստի, գրականության և այլևայլ բնագավառներում տարբեր ուղղություն, ուսմունք, հետևող ցույց տվող բառեր. ինչպես՝ լենինյանիզմ, մարքսիզմ, մարքսիստ, իդեալիզմ, մատերիալիզմ, մախիզմ, իդեալիստ, ուտոպիստ, ֆրեյդիզմ, ակմեիզմ, ակմեիստ. կուրիզմ, կուրիստ և այլն: դ) Զինվորական տարբեր կոչումներ ցույց տվող բառերի զգալի մասը. ինչպես՝ ճգրեյտոր, սերժանտ, միլիան, լեյտենանտ, կապիտան, մայոր, գեներալ, մարշալ և այլն: ե) Բուսական և կենդանական աշխարհի այնպիսի ներկայացուցիչների անվանումներ, որոնք հայկական բնաշխարհում չեն աճում կամ բաղմանում, կամ էլ մասնադիտական տերմին են, և սույլ պատճառով էլ դրանց համապատասխանող օտար բառերը հաճախ հայերեն չեն թարգմանվում. ինչպես օրինակ՝ դեմոգալ, իվասի, կուլա, մոյվա, մուֆլոն, պինգվին, ստավերդա, ստերլյադ, ֆլամինգո, կամ՝ ապելսին, արախիս, բանան, գրեյպֆրուտ, մանդարին, կակաո, ցիտրուս և այլն: զ) Առևտրի տարբեր բնագավառների զանազան հասկացություններ նշանակող տերմիններ ու բառեր, երաժշտական գործիքներ, եղանակներ, արվեստի տեսակ, սեռ նշանակող բառեր. ինչպես՝ ակորդեոն, բայան, դոմբրա, կլառնետ, ֆագոտ, բալետ, օպերա, սիմֆոնիա, սոնատ, ջութ, էստրադա և այլն: է) Սպորտային կյանքին, մարզական որոշ ձևերին վերաբերող բառեր. ինչպես՝ բասկետբոլ, ֆուտբոլ, վոլեյբոլ, թենիս, բայդարկա, կանոն, բոքսինգ, գրասպաստեր, կարատե, ձյուդո, կարտինգ, սամբո, սպիդէյ, վոլեյբոլիստ, բասկետբոլիստ, ֆուտբոլիստ և այլն: ը) Կենցաղային, տնային, արդուզարդի զանազան առարկաներ, պիտույքներ, հագուստեղեն, կտորեղեն և այլն նշանակող բառեր. ինչպես՝ բրեզենտ, գաբարդին, կրեպոժոժետ, սատին, կոստյում, օակետ, մայկա, ջեմպր, ջինս, կոմոդ, բալֆետ, բուլդուար և այլն: թ) Խոհարարական զանազան առարկաներ, սննդամթերք, խմիչեղեն, խմորեղեն, ճաշատեսակներ նշանակող բառեր. ինչպես՝ ախտեկոտ, բիտլի, բորչչ, բիսկվիտ, կեֆա, տաք, վաֆլի, կոնֆետ, լիմոնադ, լիկյոր, վիսկի, կոնյակ, շամպայն, կոկա-կոլա, մարգարին, մակարոն, վերմիշել և այլն:

Հայերեն համանշանակ կամ համապոր ունեցող փոխառությունները բաժանվում են հետևյալ խմբերի.

1) Հայերեն լիարժեք համազորներ ունեցող փոխառություններ, երբ լեզվում նախապատվությունը ստիվում է սեփական համազորին կամ փոխառյալը և սեփական բառերն ունեն զուգահեռ գործածություն:

2) Հայերեն լիարժեք համազորներ չունեցող փոխառություններ, երբ նախապատվությունը տրվում է վերջիններս:

Հայերեն հոմանիշներ կամ համապատասխանություններ ունեցող փոխառություններից առանձին խումբ են կազմում պարբերական մամուլում հանդիպող փոխառյալ այն բառերը, որոնց իմաստով հայերեն համազորները կան լեզվում. ինչպես՝ դիկտոր—ձաղորդավար, դիպլոմատ—դիվանագետ, դիսցիպլինա—կուրսադասնություն, լեկցիա—դասախառություն, պսիխոլոգիա—հոգեբանություն, պոմադա—ջրթաններ, պուդրի—դիմափոշի, սոսիսկա—նրբերջիկ, ստադիոն—մարզադաշտ, ստրատոսֆերա—վերնոլորտ, վագրանկա—քուջանալոց, տիրաժ—տպահանակ, ցեխ—արտադրամաս, օրանժ—նարնջագույն, օրկեստր—եվագախումբ, ֆեստիվալ—փառատոն, ֆոյե—նեմասրահ և այլն:

Այս կարգի փոխառյալ բառերի մուտքը ժամանակակից հայոց լեզվի բառային կազմ և գործածությունը լեզվում ընդհանրապես պայմանական բնույթ է կրում: Ըստ իրենց գործածականության և լեզվում յուրացման աստիճանի դրանք տարաբնույթ են: Նախ՝ անհրաժեշտ է տարբերակել և առանձնացնել այն փոխառությունները, որոնք ժամանակակից հայերենում չեն յուրացվել հայերեն լիարժեք համազորների առկայության պատճառով. ինչպես՝ դիկտոր—ձաղորդավար, դիպլոմատ—դիվանագետ, լեկցիա—դասախոսություն և այլն: Բերված փոխառյալ բառերի գործածությունը մամուլի լեզվում օրինաչափ չէ հայերեն համազորների լայն գործածության պատճառով և պետք է պատահական համարել:

կերպորոգ խմբի մեջ մտնող փոխառյալ բառերի գործածությունն արդեն պատահական համարել չի կարելի, անկախ նրանց հայերեն հաջող համադրոնների առկայությունից. *ինչպես, օրինակ՝ գեմմոֆոլոգիա—երկրակազմություն, շտեպսել—վարդակ, ռեֆլեկտոր—ցուլաճակ, ստրատոսֆերա—վերնոլորտ, օկուլյար—ակնապակի, օքսիթոլոգ—թռչնագետ և այլն: Այս դեպքում արդեն հայերեն հաջող համադրոնների առկայությունը չի խանգարում համապատասխան փոխառյալ բառերի գործածությանը: Մեր կարծիքով, սովյալ հարցում առաջին հերթին որոշակի դեր է խաղում այս կարգի փոխառյալ բառերի որևէ քնազավառի տերմինային բառապաշարին պատկանելը կամ նրանց հայերեն համադրոնների նորակազմ լինելը: Մյուս կողմից, հայերենում մի շարք բառեր որոշ ժամանակ հաջողությամբ գործածվելուց հետո ինչ-ինչ պատճառներով իրենց տեղը զիջում են դարձյալ փոխառությունը՝ նախապատվությունը տալով վերջինիս: Այդ երևույթի ակնհայտ արտահայտություններ են փոխառյալ ստադիոն և սեփական մարզադաշտ բառերը: Նախապատվությունը կարող է սովել փոխառությանը նաև այն դեպքերում, երբ հայերեն նույն բառը ներկայացվում է իբրև փոխառյալ տարբեր բառերի համագործ-համապատասխանություն. *ինչպես՝ հայերեն հանկարծաստեղծություն և օտարազգի էֆսլյումա և իմպրովիզացիա, կամ՝ հայերեն խորհրդատու, օտարազգի կոնսուլտանտ և կոնսուլտանտիվ բառերի համար:**

Առանձնանում են հայերեն համանշանակ ունեցող փոխառությունները, որոնք հայերեն համադրոնների հետ զուգահեռաբար գործածվում են լեզվում. *ինչպես՝* ավտոնոմ—ինքնավար, ավտոնոմիա—ինքնավարություն, բակտերիոլոգիական—մանրէաբանություն, դիսկուսիա—բանավեճ, դիրիժոր—օդայա-րիկ, էպիգրաֆիա—վիմագրություն, բեռլոգիա—առավածաբանություն, ինդի-վիդուալիզմ—անհատապաշտություն, ինտելիգենտ—մտավորական, ինտելիգենցիա—մտավորականություն, լիբիկա—ֆնարեբզություն, կոմվեյեր—հա-րահոս, պրոգա—արձակ, տրագեդիա—ողբերգություն, օնկոլոգիա—ուռուցա-բանություն և այլն: Այս կարգի բառերը պատկանում են տարբեր քնազավառ-ներին:

Օտար (փոխառյալ) և սեփական բառերի զուգահեռ գործածությունը, մեր կարծիքով, չի բխում մեկի կամ մյուսի առավելությունից կամ թերությունից: Որոշ դեպքերում նրանց գործածությունը պայմանավորված է ճանկան նկա-տառումներով, ելնելով խոսքաշարի (կոնտեքստի) առանձնահատկությունից կամ պահանջից. *ինչպես, օրինակ՝* լիբիկա—ֆնարեբզություն, պրոգա—արձակ, ինտելիգենտ—մտավորական զուլգերը: Մյուս դեպքերում օտար և սեփական բառերի զուգահեռ գործածությունը ժամանակավոր է, մինչև որևէ մեկի վերջ-նական հիմնավորումը լեզվում:

Որոշակի քանակ են կազմում հայերեն մեկից ավելի հոմանիշներ ունեցող փոխառությունները. *ինչպես՝* բազալտ—սևակուն, կնաֆա. բարեկյեֆ—խորա-ֆանդակ, ցածրաֆանդակ. էլսինոկոկ—բշտանիճու, բշտոդ, պարկանիճու. է-տալոն—չափանմուշ, ստուգանմուշ. իդեոլոգիա—գաղափարախոսություն, գա-լափարաբանություն. կաֆել—հախճաճալ, հախճաղյան. պիզմենա—գունակ, գունանյութ. ռեիզոր—ֆենիչ, վերաֆենիչ, վերստուգիչ. ռեֆորմ—բարեփո-խություն, բարենորոգություն. ցիտատ—մեղբերում, ֆաղվածֆ և այլն:

Փոխառության տարածմանը կարող է նպաստել օտար բառի համար հա-յերեն մեկից ավելի համանշանակ բառերի առկայությունը: Այս դեպքում որոշակի դեր է խաղում հայերեն բառերից ձևով և բովանդակությամբ լավա-գույն ընտրության դժվարությունը: Այսպես, օրինակ՝ օտար բազալտ բառի հայերեն սևակուն և կնաֆա, բարեկյեֆ բառի հայերեն խորաֆանդակ և ցած-րաֆանդակ, էլսինոկոկ բառի հայերեն բշտանիճու, բշտոդ և պարկանիճու համանշանակներից վերոհիշյալ պատճառով նախապատվությունը հաճախ տրվում է փոխառություններին:

Որոշ դեպքերում փոխառյալ բառի հայերեն հոմանիշները փոխարինվում են հայերեն նորակազմ մեկ համանշանակով՝ օտար բառի հետ մրցության մեջ հաղթանակով դուրս գալու հավանականությունը մեծացնելու նպատակով։ Վերջինիս ապացույցն է փոխառյալ զիդ բառի հայերեն սկզբնական հոմանիշ ուղեցույց, առաջնորդ համանշանակների փոխարեն նորակերտ ուղեվար բառի գործածությունը։

Մյուս կողմից, փոխառյալ բառին նախապատվություն տալու հիմնական պատճառն ընդհանրապես այն է, որ որպես օրենք չի խրախուսվում տերմինների հոմանիշությունը։ Տվյալ դեպքում փոխառյալ բառի համար մեկից ավելի հոմանիշների առկայությունն ինքնին լուծում է այդ հարցը հօգուտ փոխառության։

Մեծ խումբ են կազմում հնչյունական կամ իմաստային տեսակետից ոչ լիարժեք հայերեն համադրոներ ունեցող փոխառությունները։ Այս դեպքում փոխառյալ բառի տարածմանը նպաստում է հայերեն համանշանակի հիմնականում իմաստային ոչ լիարժեքությունը։ Փոխառության հայերեն համապատասխանությունը ոչ լիարժեք է համարվում մի քանի պատճառներով։ Այս հարցում առաջին հերթին ուղղակի նշանակություն ունեն հայերեն թարգմանության իմաստային այլևայլ թերությունները՝ հայերեն համապատասխանության իմաստային անճշտությունը, թարգմանվող բառի ոչ բոլոր իմաստների արտահայտումը և այլն։

Ժամանակակից հայերենում բառային փոխառության տարածման և յուրացման պատճառներին է նաև հայերեն համապատասխանությունների իմաստային ոչ նույնականությունը՝ տվյալ փոխառյալ բառի իմաստի կամ իմաստների համեմատությամբ։ Այսպես՝ օտար կոմպոզիտոր և հայերեն երգահան, երաժշտաբան, երաժշտաստեղծ և այլն, օտար էվալյուցիա և հայերեն բրնաշրջություն, բաբշրջություն, բնաշրջում բառերը, նշված փոխառյալ բառերի մասին է. Աղայանը գրում է. «Հաճախ է պատահում, որ մենք այս կամ այն տերմինը հայացնում ենք և նույնիսկ լայն գործածություն ենք տալիս, կամ ավելի ճիշտ, պրակտիկայում այդ հայերեն բառը մեծ գործածություն է ստանում, և այնուամենայնիվ, հաճախ ստիպված ենք լինում դարձյալ հրաժարվել այդ բառից, որը թվում է, թե պրակտիկայում իրեն արդարացրել է, ու դրա փոխարեն գործածել օտար տերմինը։ Ունի՞ սա արդյոք ինչ-որ գիտական հիմունք, և եթե ունի, ո՞րն է։

Անշուշտ, առաջին հերթին այստեղ մենք գործ ունենք իմաստային ճշգրտության հետ։ Որպեսզի տվյալ հայերեն բառը գործածենք համապատասխան օտար տերմինի փոխարեն, պետք է, որ այդ հայերեն բառը ճիշտ կերպով արտահայտի համապատասխան տերմինի գիտական (տեխնիկական, արտադրական և այլն) իմաստը։ Կոմպոզիտոր բառի փոխարեն վերջին տարիներում հաճախ գործածում են երգահան բառը, որը անցյալում էլ գործածվել է, և սակայն, պարզ է, որ այդ բառը չի կարող դուրս մղել կոմպոզիտոր բառին, առաջին հերթին իմաստի ոչ լիարժեք համապատասխանության պատճառով։ Կոմպոզիտոր-ը երգ հանող, երգ ստեղծող կամ ստեղծագործող չէ, այլ՝ երաժշտական ստեղծագործություններ հեղինակող՝ ստեղծագործող (մյուս իմաստները մի կողմ ենք թողնում)։ Հասկանալի է, որ այս դեպքում կոմպոզիտոր բառը պետք է հաղթի, հակառակ բոլոր «երգահանականների ջանքերին»։ Նույնպես և՛ էվալյուցիա բառը²։

Օտարադգի բառի հայերեն համապատասխանության կամ համադրի իմաստային անճշտության կամ ոչ լիարժեքության օրինակներ են փոխառյալ դեմագոգ, դեմագոգիա բառերի հայերեն ամբողջական, ամբողջականություն թարգմանությունները, կամ սոցիալիզմ, սոցիալիստ, կոմունիզմ, կոմունիստ, մատերիալիզմ, մատերիալիստ և բնկերավարություն, բնկերավար, համայնա-

² Է դ. Աղայան, Տերմինաբանության մի քանի խնդիրների մասին (ՀՄՄՀ ԳԱ «Լեզուներ», 1971, № 1, էջ 93)։

վար. համայնավարություն, նյութապաշտություն, նյութապաշտ զուգահեռներ, բերված օրինակներում օտարազգի բառերի հայերեն համապատասխանությունները թեև հնչյունական և բառակազմական տեսակետից չեն հակասում ժամանակակից հայերենի գործող կանոններին և օրինաչափություններին, բայց խոտելի են իմաստային առումով: Դրանք չեն արտահայտում օտարազգի նշված բառերի ընդգրկած համապատասխան հասկացությունների ծավալը և աղետելով ու աղավաղելով օտարազգի բառի բովանդակությունը, չեն կարող հանդես գալ իբրև վեղիներին լիարժեք համանշանակ կամ համազոր: Օրինակ՝ ինչպե՞ս կարող են հայերեն, աղեհոսություն, մաղձահոսություն բառերը համարվել օտարազգի, փոխառյալ խոլերա բժշկական տերմինի համապարհներ, որոնցում ակնհայտ է իմաստային անհամապատասխանությունը: Նույն պատճառով չեն կարող օտարազգի բառերի իմաստային լիարժեք համապարհներ համարվել նաև հայերեն՝ փոխվեծ (ռեանջ), կեռաշերեփ (սկրեպեր), մեծածաղիկ (կակտուս), թեճակ (ռակետա) և այլ բառերն ու տերմինները: Այս և նման դեպքերում, ինչպես նշվել է, նախապատվությունը տրվում է փոխառությանը:

Փոխառյալ բառերի հայերեն համապատասխանությունների իմաստային թերությունները միայն նշված անճշտություններով չեն ավարտվում: Հաճախ օտարազգի բառի տարբեր իմաստների համար հայերենում կերտվում են տարբեր բառեր, որոնք հնչյունական, բառակազմական և իմաստային տեսակետից շատ դեպքերում կարող են լիարժեք համապարհներ համարվել. ինչպես օրինակ՝ անտիկվար—1. հնահավաք, 2. հնավաճառ. ակցիա—1. բաժնետոմս, բաժնեբուլո, 2. գործողություն. ակուստիկա—1. ձայնաբանություն, 2. լսելիություն, լինչկանություն և այլն: Նման դեպքերում սեփական (հայերեն) և փոխառյալ բառերի միջև լեզվական դործընթացում ստեղծվում են տարբեր հարաբերություններ:

ա) Օտարազգի բառերի համար ստեղծվում են հայերեն առանձին բառեր. ինչպես՝

անսամբլ—1. համախաղ, 2. համանվագ, 3. համույթ, 4. համակառույց.

ասոցիացիա—1. միություն, ընկերություն, 2. զուգորդություն, 3. միացություն.

ասպեկտ—1. տեսանկյուն, հայեցակետ, 2. (բար.) տեսույթ, 3. (լեզվբ.) կերպ և այլն:

Այսպիսի դեպքերում հայերեն ոչ բոլոր համապատասխանություններն են, որ կարող են հանդես գալ իբրև օտարազգի տվյալ բառի բոլոր իմաստների իմաստային ու բառային տեսակետից լիարժեք համազորներ և լեզվական գործընթացում փոխարինել նրան: Այսպես՝ անսամբլ բառի երաժշտական բնագավառին պատկանող երեք տարբեր իմաստների համար կազմված հայերեն համախաղ, համանվագ, համույթ և չորրորդ՝ ճարտարապետական իմաստ արտահայտող համակառույց բառերը փաստորեն չեն փոխարինում փոխառությունը:

բ) Նկատվում է փոխառյալ բառի և նրա առանձին իմաստների հայերեն համազորների զուգահեռ գործածություն. ինչպես՝ ասպեկտ և տեսանկյուն, տեսակետ. դետալ և մաս, մանրամասնություն. դիալոգ և երկխոսություն, տրամախոսություն. ակցիա և բաժնետոմս. ակուստիկա և ձայնաբանություն. դիապազոն և ձայնածավալ. ժուռնալ և հանդես, մատյան. սեսիա և նստաշրջան, ֆենաշրջան:

գ) Որոշ դեպքերում նախապատվությունը տրվում է օտարազգի բառի առանձին իմաստի հայերեն համազորին և վերջինս էլ ստանում է ինքնուրույն, անկախ գործածություն. ինչպես՝ լեզվաբանական նշանակությամբ հայերեն կերպ (քերականական) տերմինը օտարազգի ասպեկտ բառի փոխարին:

Հետաքրքիր են հատկապես բազմիմաստ այն փոխառությունները, որոնց ոչ բոլոր իմաստների համար են կերտվում հայերեն համապատասխան առանձին տարբեր բառեր: Այս դեպքում օտարազգի բառը և հայերեն նորակազմությունը

ժամանակակից հայերենում գործածվում են նույն բառի տարբեր իմաստներ արտահայտելու համար: Այսպես՝ փոխառյալ տիրաժ բառը գործածվում է «վիճակախաղի կամ պետական փոխառության պարտատոմսի խաղարկման համար»³ իմաստով, իսկ տպագրության միանվագ քանակի իմաստով գործածվում է հայերեն տպագրության բառը:

Օտարազգի մի շարք բառեր իրենց տերմինային իմաստներով ժամանակակից հայերենին են անցել իբրև փոխառություններ, մինչդեռ այդ բառերի ոչ-տերմինային, համագործակցական իմաստները թարգմանվել և դրանց համար հայերենում կազմվել են առանձին բառեր: Ժամանակակից հայերենում իբրև երաժշտական տերմին, երաժշտական երկի անուն՝ գործածվում է ֆանտազիա բառը: Այդ բառի մյուս իմաստները թարգմանվում են հայերեն երևակայություն, երազանք և այլ բառերով: Միևիմուտ օտարազգի բառը ժամանակակից հայերենում գործածվում է «որևէ բնագավառում անհրաժեշտ դիտելիքների և միջոցառումների ամբողջություն». քեկնածուական միևիմուտ. տեխնիկական միևիմուտ և այլն»⁴ իմաստով: Նույն բառի մյուս իմաստները հայերենում թարգմանվում են՝ նվագազույն, առնվազն բառերով: Կարենտ բառը հայերենում գործածվում է իբրև արտասահմանյան «մինիստրների խորհուրդ և ուսումնական, գիտական, բուժական նպատակների ծառայող հատուկ սարքավորված սենյակ»⁵ իմաստներով, իսկ նրա մյուս իմաստները փոխարինվում են հայերեն աշխատասենյակ, առանձնատեսչական՝ բառերով:

Ժամանակակից հայերենում օտարազգի բառերի գործածությանը նախապատվություն տալուն կարող է նպաստել նաև դրանց համար կազմված հայերեն կիսապատճենումների թերությունները, որոնք հիմնականում վերաբերում են բառի արտաքին կողմին՝ նրա կազմությանը, հնչյունական կազմին: Այսպես՝ էլեկտրալիզ, էլեկտրիֆիկացիա բառերի էլեկտրալիզում, էլեկտրավառում հայերեն համապատասխան կիսապատճենումները զիջում են առաջիններին: Նույն պատճառով նաև բալետմայստեր-բալետապետ, բալետավար, ֆարթիկանտ-ֆարթիկապետ, ֆինանսիստ-ֆինանսագետ, ռասիստ-ռասայական և այլն օտարազգի և սեփական զուգահեռներում նախապատվությունը տրվում է փոխառյալ բառերին:

Որոշ դեպքերում օտարազգի բառերը թարգմանվում են հայերեն բառակապակցություններով. օրինակ՝ նեոլիթ- նոր ֆառե դար, պալեոլիթ- նին ֆառե դար, ֆաունա-կենդանական աշխարհ, ֆլորա-բուսական աշխարհ: Նման օրինակներում հայերենը թեև իմաստային տեսակետից ավելի հասկանալի ու մատչելի է, բայց, այնուամենայնիվ, հայկական համանշանակները լիովին չեն փոխարինում օտարազգի բառերին և լեզվում հաճախ զուգահեռ գործածություն ունեն նրանց հետ:

Ժամանակակից հայերենում գործածության և տարածվածության տեսակետից քննարկվող փոխառյալ բառերը միատարր չեն: Իրենց այս առումով դրանք դասակարգվում են ակտիվ և ոչ ակտիվ կամ պասիվ փոխառություններին: Գործածությամբ ակտիվ բառային փոխառությունները, անկախ իրենց մասնագիտական-տերմինաբանական այս կամ այն համակարգերի պատկանելության, լայն կիրառություն ունեն հիմնականում գրական լեզվի գրավոր տարբերակում, իբրև լեզվի ընդհանուր գործածական բառեր: Այդ պարագայում արդեն բնականաբար վերանում են տերմինն ու լեզվի սովորական բառն անջրպետող սահմանները, հետևաբար և այդ կարգի փոխառյալ բառերը լեզվում րնկալվում և ընդունվում են լեզվի համագործածական, սովորական բառերի հետ հավասարապես: Լեզվում ակտիվ գործածություն ունեցող փոխառյալ բառերը

³ Է. Դ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1443:

⁴ Նույն տեղում, էջ 1011:

⁵ Նույն տեղում, էջ 665:

⁶ Հմմտ. Հ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, 1982, էջ 343—346:

վերաբերում են մարդկային կյանքի և գործունեության բոլոր բնագավառներին՝ հիմնականում տնտեսական և մշակութային կյանքին, հասարակական-քաղաքական և գիտական ու տեխնիկական տարբեր բնագավառներին: Այդ տեսակետից հատկապես լայն կիրառություն ունեն հասարակական-քաղաքական կյանքին, արդյունաբերությանը, գյուղատնտեսությանը, մշակույթին, արվեստին, սպորտին, կենցաղին, սնունդին, հագուստեղենին ու արդուզարդեղենին վերաբերող փոխառությունները. ինչպես՝ ագիտատոր, ագիտացիա, ագրեսիա, ագրեսոր, ագմինիստորատոր, ագմինիստրացիա, ագոտ. աթեիզմ, աթեիստ, ալքոմ, ալերգիա, ալկոհոլ, ալկոհոլիզմ, անաբիսիա, անաբիսիստ, անեմիա, անեմիոնիզմ, ագրեգատ, ասֆալտ, ավիացիա, ավտոբուս, ավտոմատ, ավտոմատիկա, արտիստ, արտիստիզմ, աֆորիզմ, գրամա, պրեմիերա, բայետ, դիրիժոր, ռեժիսոր, էտյուդ, գրաֆիկա, պեյզաժ, ագրոնոմ, ագրոտեխնիկա, կոմբայն, տրակտոր, սովխոզ, ֆուտբոլ, բասկետբոլ, վոլեյբոլ, հոկեյ, ֆուտբոլիստ, բասկետբոլիստ, կամ՝ ժակետ, ժիլետ, կոստյում, քեմայր, դովաի, օդեկոլոն, բորշյ, բուլյոն, լիմոնադ, կոմպոտ, ադմինիստրատ, և այլն: Նշված բառերի հիմնական առանձնահատկությունն այն է, որ՝ ա) դրանք ժամանակակից հայերենում չունեն իրենց հայերեն լիարժեք համարժեքները. ինչպես՝ ագրեսիա, ագրեսոր, տրակտոր, կոմբայն, ֆուտբոլ, վոլեյբոլ և այլն. բ) այդ կարգի բառերի զգալի մասն ալիտիզորեն մասնակցում է նաև հայերենի բառակազմությանը. գ) տերմինաբանության տարբեր համակարգերին պատկանող այդ փոխառությունները իրենց ակտիվության շնորհիվ մուտք գործելով լեզվի ընդհանուր գործածական բառապաշարը, իբրև լեզվի բանագործածական, սովորական բառեր՝ ձեռք են բերում վերջիններս հատուկ բառային բոլոր հատկանիշները:

Առանձին խումբ են կազմում գործածությանը ոչ ակտիվ կամ պասիվ փոխառությունները: Այս կարգի բառերը նախորդի համեմատությանը ինչպես զրավոր, այնպես էլ բանալոր խոսքում որևէ ակտիվություն չեն ցուցաբերում: Դրանք նույնպես վերաբերում են հատկապես գիտատեխնիկական տերմինաբանության տարբեր բնագավառներին: Այս կարգի փոխառյալ բառերի առանձնահատկությունն այն է, որ ա) դրանք հիմնականում նեղ մասնագիտական տերմիններ են. ինչպես՝ ագրոցենոզ, աերոզեն, ակրոֆագա, էնտոմոֆագ, նեյրոհորմոն (կենսաբանություն), աֆեիկնուս (միջատ), բրոնտոզավր, պոզունֆոր (կենդանի), լոգենարի (վարունգի տեսակ), ասրոֆրիցիոնիտ, ավգիտիտ, իզոնիմերիտ (երկրաբանություն), ալգորիթմ, ակուստո-էլեկտրոնիկա, մյուռն, մյուսկզոն (ֆիզիկա, կիբեռնետիկա, տեխնիկա), ադենոգիտրիֆոսֆատ, դիադետոն, սուրբոզա, դիֆուզիոնադիեն, մեթալիկարբինոլ, մեթիլենտետրաֆորմալ, մեթիլմինիլկիտոն, պոլիմինիլֆորմիդ, պոլիֆորմալդեհիդ, բուրաքենդիլատ (քիմիա), ակուպունկտուրա, անտրակոզ, գաստրոէնտերոլոգ, իմունոդեպրեսսանտ, իմֆոզադնոնեմատոզ, խոլանգիտնեպատիտ, պելվիոպերիտոնիտ (բժշկություն), կամ՝ ուրթերգեր, ռոլկերինգ (սպորտ) և այլն:

բ) Հիշատակության արժանի են մեր ժամանակներում արդեն հնացած հասկացություններ արտահայտող որոշ փոխառյալ բառեր. ինչպես՝ շտաբսկապիտան, ֆլիգել-ադյուտանտ, ֆլիգել-ակսելրանտ, ոլոստ, պրեզիմնագիա, օբերշտուրմ-ֆյուրեր, ֆրից և այլն: Դրանք իբրև պատմական բառեր՝ դուրս են մնացել սկզբնաղբյուր լեզուների ակտիվ բառապաշարից, այդ իսկ պատճառով էլ պասիվ գործածություն ունեն նաև ժամանակակից հայերենում:

գ) Այդ կարգի բառերի մեջ հանդիպում են նաև, այսպես կոչված, անհարկի փոխառություններ, որոնց հայերեն համանշանակները կան և հաջողությամբ ծառայում են լեզվին, ինչպես՝ հոթել (օթել), շտուդիա, պադլայ, պրոբկա, պուդրի, պեշկա, տրասա, տուրնիր և այլն: Պասիվ գործածական բառերից գիտություն և տեխնիկայի մյուս բնագավառների համեմատությանը զգալի թիվ են կազմում հատկապես քիմիային և բժշկությանը վերաբերող փոխառությունները:

Նշված խմբերին պատկանող բառերի մուտքը պարբերական մամուլ, ըստ երևույթին, պայմանավորված է վերջինիս յուրահատուկ բնույթով, մամուլում գիտության, տեխնիկայի, արտադրության, արվեստի և կյանքի բազմազան

բնագավառներին վերաբերող բազմաբնույթ նյութերի հրապարակման պահանջով:

Ի տարբերություն գործածությամբ ակտիվ փոխառյալ բառերի, նշված կարգի փոխառությունների հիմնական առանձնահատկությունն այն է, որ ա) դրանց զգալի մասը ժամանակակից հայերենում ունի հայերեն համանշանակներ. բ) այդ բառերն իրենք իբրև օրենք չեն մասնակցում, ավելի ճիշտ որևէ ակտիվություն չեն ցուցաբերում հայերենի բառակազմությանը. գ) լեզվում իրենց պասիվության պատճառով չեն մտնում լեզվի ընդհանուր գործածական բառապաշարը և մեկուսացած մնալով փաստորեն դառնում են բառային շեեսակետից լեզվում չլուրացված միավորներ:

Ժամանակակից հայերենում քննարկվող փոխառությունների յուրացումն ընդհանրապես պայմանավորված է նաև հայերենի բառակազմությանը նշված կարգի բառերի մասնակցությամբ: Ժամանակակից հայերենի բառակազմությանը մասնակցելու չափերով կամ աստիճանով, այդ կարգի բառերը խմբավորվում են՝ ա) հայերենի բառակազմությանը ակտիվորեն մասնակցող փոխառություններ. բ) հայերենի բառակազմությանը պասիվ մասնակցություն ցուցաբերող կամ ընդհանրապես բառակազմությանը չմասնակցող փոխառություններ: Հայերենի բառակազմության մասնակցությունը արտահայտվում է նրանով, որ փոխառյալ բառերը հայերեն բառերով (հիմքերով) ու ածանցներով ժամանակակից հայերենի բառակազմական կանոններով կերտում են նոր բառեր: Հայերենի բառակազմության մասնակցության չափերով էլ պայմանավորված է փոխառյալ բառերի բառակազմական ակտիվությունը, որն արտահայտվում է հայերենի բառակազմությանը ակտիվորեն մասնակցում են քննարկվող փոխառյալ բառերի մի զգալի մասը, հատկապես այն բառերը, որոնք լայն գործածություն ունեն լեզվում: Տեսականորեն փոխառյալ գոյականների մեծ մասը կարող է ընդունել հայերեն ածանցներ. օրինակ՝ արձենեռ-արձենետալին, ագրոֆիմիա-ագրոֆիմիական, աթեիստ-աթեիստական, սովետ-սովետական և այլն: Փաստորեն անսահմանափակ են հայերեն ածանցներով նոր գոյականներ կազմելու հնարավորությունները. օրինակ՝ ակտիվ-ակտիվություն, պասիվ-պասիվություն և այլն: Սովորական է դարձել ժամանակակից հայերենում փոխառյալ հիմքից բայերի կազմումը. օրինակ՝ մոնեռա-մոնեռածել, սինթեզ-սինթեզել, բետոն-բետոնել, ցեմենտ-ցեմենտել, ինտեգրալ-ինտեգրել, ֆիգուրալ-ֆիգուրել և այլն:

Փոխառյալ բառերը հատկապես մեծ ակտիվություն են ցուցաբերում հայերեն նորակազմ բարդություններում: Օտար՝ փոխառյալ և հայերեն բաղադրիչներով կազմված բարդ և բաղադրյալ բառերը ժամանակակից հայերենում հազարների են հասնում: Այդ տեսակետից ուշադրավ են միջազգային ագրո-, սերո-, ավիա-, էլեկտր-, էներգ- տեխնիկատարրերով և կինո, ռադիո, ֆոտո բառերով ժամանակակից հայերենում կազմված բաղադրությունները: Այսպես՝ էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» ագրո- բաղադրիչով արձանագրված է 18 բառ՝ ագրոդատրոն, ագրոպարոց, ագրոմակետ և այլն, ավիա-ով՝ 14 բառ՝ ավիաարդյունաբերություն, ավիագիծ, ավիակիր և այլն, սերո-ով՝ 12 բառ՝ սերոակումբ, սերոպարոց, սերոկարահանում և այլն, էլեկտր- բաղադրիչով մոտ 300 բառ՝ էլեկտրալուսանկարչություն, էլեկտրակայան, էլեկտրանվագաբիլի, էլեկտրացանց, էլեկտրաֆար, և այլն, մոտ երկու տասնյակ բառ էներգ- բաղադրիչով՝ էներգահամակարգ, էներգասնուցում, էներգաշինարար և այլն, մոտ 110 բառ կինո բառով՝ կինոաստղ, կինոբեմադրություն, կինոդիտող, կինոնկար և այլն, 150 բառ ռադիո բառով՝ ռադիոագրանջան, ռադիոալիք, ռադիոբեմադրություն, ռադիոնյութ և այլն, ֆոտո-ով՝ մոտ 40 բառ՝ ֆոտոհեռագիր, ֆոտոսիրող, ֆոտոփաստաթուղթ և այլն:

Փոխառյալ բառերի մյուս մասը հայերենի բառակազմությանը պասիվորեն է մասնակցում կամ ընդհանրապես չի մասնակցում: Ըստ խոսքի մասերի պատկանելության, դրանց մեջ են մտնում փոխառյալ գոյականների մի մասը և հիմնականում ածականները: Գոյականներից առաջին հերթին այն փոխառու-

թյուններն են, որոնք ժամանակակից հայերենում իբրև նեղ մասնագիտական բառեր ընդհանրապես մեկուսացած են և լայն տարածում չունեն։ Դրանք գիտատեխնիկական տարբեր բնագավառներին՝ ֆիզիկային, քիմիային, կենսաբանությանը, բժշկությանը վերաբերող տերմիններ են. ինչպես, օրինակ՝ գրեյդեր, էրեկտոր, հոլոգրամ, մեզաֆոն, ջիպ, վանտուզ, տրաուլեր, ցիստեոն (տեխնիկա), ինդիկացիա, ֆոտոէֆեկտ (ֆիզիկա), ալգիլան, անտիօֆսիդանտ, ւֆալին, բայլետոն, պոռֆիրին, ուրիզան (քիմիա), ասեպտիկա, լայցին, էմֆիզեմա, ոփեալալիա, գաստրոսկոպիա, ֆիրալենդոսկոպիա (բժշկություն) և այլն։ Նշված խմբին են պատկանում նաև լեզվում լայն գործածություն ունեցող փոխառություններից այնպիսիները, որոնք գիտություն, ուսմունք, քաղաքական հոսանք, գիտական ուղղություն նշանակող բառեր կամ տերմիններ են. օրինակ՝ անալիզիզմ, էֆսպանսիզմիզմ, իմպերիալիզմ, ինտերնացիոնալիզմ, նացիզմ, նեոնացիզմ, իդեալիզմ, մատերիալիզմ, ռեալիզմ և այլն։

Այսպիսով, փոխառյալ բառի բառային ամրողչական յուրացման չափսն իշխող մեկն էլ, անշուշտ, նրա մասնակցությունն է ժամանակակից հայերենի բառակազմությանը։ Այդ չափանիշը, սակայն, բացարձակ չէ, քանի որ, ինչպես ցույց են տալիս փաստերը, որոշ դեպքերում փոխառյալ բառի ամրողչական յուրացման հարցում նրա՝ լեզվական նոր միջավայրում դրսևորած բառակազմական ակտիվությունը կամ պասիվությունը վճռական դեր չեն կատարում։

ЛЕКСИЧЕСКОЕ ОСВОЕНИЕ ЗАЙМСТВОВАННЫХ СЛОВ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

КНАРИК СУКИАСЯН

Р е з ю м е

Лексико-семантическое освоение заимствованных слов с русского языка в современном армянском языке происходит с помощью как внеязыковых, так и внутриязыковых факторов. Исследуются вопросы, касающиеся степени освоения указанных слов.